

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 20 կիրակի 1 յունիսի | ութերորդ տարի 1897

ՅԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի *վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտո-գրաւիւրը պատկերը*, 2) *Մարիկի ննջարանում, մի շքեղ խրոմօ*, 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարսնի աղջիկը*, 4) *Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդաներ, բացատրութիւններով:*

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 r. (արտասահման 4 r. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 r. (արտասահման 10 r. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. *պրեմիաները տալուում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրւող բաժանորդը, վճարելով եւ մեկ ռուբլի:*
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Կ Ե Ց Ն Ք

Ձիր առօրեայ, ձիր հրաշալի,
Կեա՜ցիք դուք, վասնէ՛ր ինձ
տուար...

Ընտիր հատուածք. (Մոսկուա, 1849)

Աղբիւրակոյզ կեանքի ալիքների մէջ
Ես ծրլիծրլում եմ որպէս մի նաւակ.
Չունիմ մի նեցուկ, յենելու մի խեչ,
Որ հանգիստ առնեմ վայրկեան ժամանակ:
Ես այս դոյզթեան կրուի դուռ դաշտում
Ինչո՞ւ եմ ռազմում, կրուում շարունակ.
Ինչո՞ւ այս անհուն, կատաղի ծովում
Միշտ աշխատում եմ տանել յաղթանակ:
Ինչո՞ւ ես, որպէս յարաշարժ անիւ,
Անվերջ պըտտում եմ՝ սև քրտին մրտած.
Ինչո՞ւ գոլճում եմ անյագ դիշեր, տիւ՝
Հըրի և ջըրի՝ ինքըս ինձ մատնած:—
Ասլահովելո՞ւ արդեօք հընդօրեայ
Մեր պատիր կեանքը անձուկ աշխարհում,
Թէ՞ հայթայթելու լոկ մեր առօրեայ
Փարթամ ապրուստը, որ է կեր ու խում:

Սողալո՛ւ արդեօք մոզէսի նըման
Եւ սատակելու առանց յիշատակ,
Թէ՞ մենք, որպէս մարդ, խօսուն, բանական,
Ունինք ուրի՛շ պարտ, ուրի՛շ նըպատակ...

Եւ ի՞նչ է արդեօք մեր կեանքի վախճան.—
Երկու բուռ սև հո՛ղ, լոկ մի գերեզմա՛ն,
Ուր մահկանացուն, որպէս դիւրաշէջ
Մի կայծ, պիտ հանգչի անյայտութեան մէջ.

Թէ՞ մենք մեր մահով մի նոր գոյութեան
Սկիզբն ենք դընում, կամ ծընանում ենք,
Որ մի երջանիկ, մի երանական,
Մի յաւերժական աշխարհում ապրենք...

Եթէ մենք, որպէս հոգի կենդանի,
Պիտի չըլինենք զոհ ոչընչութեան,
Եւ արհաւիրքը խոր գերեզմանի
Չէ լինելու խոչ մեր անմահութեան.—

Այստեղ ինձ կեանքը հասկանալի է.
Նա ունի իւր վեհ, վըսեմ նըպատակ,
Եւ մահկանացուն — նախանձելի է—
Ի զո՛ւր չէ առնում հողը ոտնատակ:

Նա պիտի ապրի, որ կարողանայ
Լըցուցանել իւր սըրբազան պարտիք.
Նա պիտի մարմնով աշխարհում մընայ,
Իսկ հոգով, մըտքով սըլանայ երկի՛նք...

Այս քաղցրիկ յուսոյ լա՛ւերի վերայ
Հոգիս փըշրելով իւր շղթաները՝
Ահա՛ ճախրո՛ւմ է դէպի յարակայ,
Դէպի միւս կեանքի օթևանները.

Եւ ես ինձ զգում եմ մի այլ աշխարհում՝
Հըրեշտակների հետ խօսակցելիս,
Ուր հաղար դար դալիս է՝ անցնում,
Որպէս երկրաւոր մի թեթև ամիս.

Ուր չըկայ դիշեր, չըկայ առաւօտ,
Ո՛չ աստղ, ո՛չ լուսին և ո՛չ արեգակ,
Այլ գերբընական մի լոյս անաղօտ
Տիրապետում է անվերջ ժամանակ:

Այնտեղ մարդիկը պայծառափոխւած՝
Չեն կըրում հետքը հողանի՛ւթ կեանքի
Եւ, անմահների պէս լուսազգեստւած՝
Ապրում են անհո՛գ, առանց տանջանքի:

Այնտեղ չեն ցաւում անցեալի վերայ
Եւ ներկան նորանց աչքում չունի դին.
Այնտեղ չըգիտեն ի՞նչ է ապագայ,
Զի չըկայ սահման, չափ ժամանակին:

Այնտեղ փափկութեան յարաբերդ դըրախտ
Անթառամելի տալիս է վարդեր
Եւ աշխարհային ցանկութիւն կամ ախտ
Չեն ապականում մարդկային սըրտեր:

Անդ խոխոջում է արծաթափըրփուր
Յուսոյ և կենաց գետը ճըշմարիտ
Եւ մըշտակարկաչ սուրբ սիրոյ աղբիւր
Թաւալում է ճոխ բուստ և մարգարիտ:

Այնտեղ հոգևոր սըրինդն Եդեմեան
Եղանակում է տաղեր քաղցրապերճ
Եւ ախորժալուր օրհնաբանութեան
Ներդաշնակ ձայնը հընչո՛ւմ է անվերջ...

Ահա՛ խորայոյզ հոգուս աչքերով
Այսպէ՛ս եմ տեսնում ես մարդու վախճան.
Նա մեռանում է մի՛միայն մարմնով,
Բայց հոգով ողջ է և անմահական:

Իսկ եթէ մարդըս, որպէս մի ճըճի,
Որպէս աննըշան մի չընչին զեռուլ,
Պիտ ուտի, քարշ գայ, մեռնի և կորչի,—
Այդ կեա՛նք չէ, այլ կեղտ, զզւա՛նք մահացու..

Ես անիծում ե՛մ այդ կեանքի վայելք
Եւ իմ ծընընդեան ժամը չարաշո՛ւք.
Ես անիծում ե՛մ արեգական ելք
Եւ նորա չըքնաղ մուտքը մեծաշո՛ւք:

Ես անարգանքով նայում եմ ահա՛
Ողջ տիեզերքի, բընութեան վերայ,
Եւ արարչութեան տեսքը գեղադէմ
Խորհո՛ւրդ զըգւանքով արհամարհում եմ...

Եթէ մեր գունդը *) բեռնաւորւած է
Լոկ անբանների անարգ կոյտերով.
Նա անպատւած է, վիրաւորւած է,
Սըրբապըղծւա՛ծ է Արարչի ձեռքով:—

Թո՛ղ նա կործանի և դառնայ փոշի՝
Տեղի տալով մի խորին լըռութեան
Եւ, զերթ մառախուղ, մըռայլ գոլորշի,
Ծածկէ հիասքանչ տեսքը բընութեան:

Թո՛ղ նա շեղւելով իւր ճանապարհից՝
Ընկնի մըշտավառ արեգի վերայ
Եւ, ինչպէս մի չոր ծառ տերևալից,
Վառւի, բորբոքի և աճյունանա՛յ:—

Բայց երանի՛, թէ ես այդ վայրկենին
Մի օ՛ձ դառնայի հըրեղէն թևով,
Որ թըռչէք առած ուղիղ դէպ երկինի՝
Աւարչապետի փարւէի վըզով...

Սիմէոն Սապարեանց

*) Երկրագունդ:

ԹԷՈԴՈՐԱ

Պատմական վէպ Ի. Փիօրեցիկիի

(Շարունակութիւն *)

XXXIV

ՋԻՈՎԱՆՆԻ ԱՐԱՔՈՆ

Կոստանդնուպոլսում արտակարգ հանդէս էր ս. Սոփիայի եկեղեցու օծման պատճառով: Յեղափոխութիւնից յետոյ Յուստինիան կայսրը հրամայել էր նորոգել տաճարը և զարդարել նրան: Նախ դրանով ղբաղւած էր ճարտարապետ Անդեմիա-ղի-Տրատէն, յետոյ երբ նա մեռաւ, նրան փոխարինեց Իղիդոր դի-Մելետոն: Տաս հազար հոգի աշխատում էին տաճարի վերանորոգութեան վրայ: Վեց տարուց յետոյ եկեղեցին ուղղւեցաւ և հանդիսաւոր կերպով օծւեցաւ Յուստինիան կայսեր, Թէոդորա կայսրուհու, ամբողջ ապարանքի, զօրքի և բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ: Օծման կարգը կատարում էր պատրիարքը, մայրաքաղաքի հոգևորականութեան ներկայացնում: Սկսած Կոստանդնուպոլսի դլխաւոր հրապարակից՝ այսինքն Օգոստոսեան, կամարներ և սրահներ էին շինւած, որոնք միանում էին եկեղեցու հետ, իննը դռներից յետոյ: Շինութիւնը նայում էր արևելք և յունական խաչի ձևն ունէր: Տաճարի ճարտարապետը սարքել տւեց այսպէս կոչւած օդային դմբեթ քսան և չորս լուսամուտներով: Տաճարի մէջ տեղը դտնում էին մարդիկ, իսկ կանայք դետեղւած էին ներսի և դրսի սրահներում: Մէջտեղը շինւած էր դահ կայսեր և պատրիարքի համար: Կողքերից, որ բաժանւում էին պատշգամբներով, կանգնած էին երգիչները: Ամբողջ տաճարը շինւած էր մարմարիոնից: Մեծ դմբեթը, երկու մէջ տեղի վեց փոքր ու հարիւր սիւները, յատակը և պատերը նոյնպէս ամենալաւ սրբատաշ մարմարիոնից էին, Փոքր-Ասիայից, Եգիպտոսից, Յունաստանից, Յոնիական կղզիներից, Աֆրիկայից և Գաղղիայից բերւած: Ֆրիստոսի, սուրբ Աստւածածնայ, հրեշտակների և սրբերի պատկերները երփնագործից էին: Թանգագին մետաղներից շինւած՝ դանազան ձևերի բազմաթիւ դամբարները հիացնում էին մարդու: Ոսկով գարդարած սեղանները, վերնատների պատշգամբները և առհասարակ բոլորը անհամեմատ հարուստ էր և շքեղ **):

Կայսրը և կայսրուհին, դահ բարձրացած, շրջապատւած էին կայսրութեան բարձրատիճան անձնաւորութիւններով, դքսերով, կոմսերով, ձեռակոչի անդամներով և պատրիկներով: Միւս կողմից պատրիարքը շրջապատւած էր բիւզանդական հոգևորականութեան գլխաւոր ներկայացուցիչներով, իրանց յունական հարուստ զգեստներով: Օդը անուշահոտութիւնով լի էր: Ծխասփռութիւնը սքանչելի: Օծման կարգը վերջացնելուց յետոյ, որ կատարեց պատրիարքը, կայսրը և կայսրուհին, շրջապատւած թիկնապահներով և պահակազօրքի սպաներով, դուրս եկան ս. Սոփիայի տաճարից խունդ բազմութեամբ լի հրապարակ:

—Կեցցէ՛ Յուստինիանը և Թէոդորան,—աղաղակում էր ամբոխը:

Կայսրը և իր ամուսինը սիրալիր ողջոյններ էին տալիս ժողովրդին. յանկարծ մէկը բարձրաձայն և պարզ աղաղակեց.

—Մահ արիւնաբերու բռնակալ Թէոդորային:

Ամենքը ակամայ ուշադրութիւն դարձրին այն կողմը, որտեղից լուեց այդ սարսափելի ձայնը: Թէոդորայի սև աչքերում փայլեց չար կրակը, մահւան դատապարտելով վիրաւորողին, որին իսկոյն և եթ ձերբակալեցին զինուորները:

Չորս կայսրուհուն վիրաւորող համարձակը դեռ բոլորովին երիտասարդ էր, դեղեցիկ, գրեթէ կանացի դէմքով: Ձերբակալելու ժամանակ նա բոլորովին չը-հակառակւեց և ազատ թոյլ տւեց, որ բռնեն իրան դինուորները: Թէոդորա կայսրուհին, դալով պալատ, իսկոյն հրամայեց կանչել ոստիկանապետին և հարցնել ձերբակալւածի մասին:

—Նա կալանաւորւած է, թագուհի,—պատասխանեց ոստիկանապետը—նրան հաղիւ կարողացել էին ազատել կատաղի ամբոխի ձեռքից:

—Այդ լաւ է: Յամենայն դէպս նա ունի ընկերներ, եթէ նա մեռնէր, մենք նրանց չէինք գլտնիլ,—ասաց կայսրուհին:—Որտեղ է նա վիակւած:

—Ձեր բանտերում, թագուհի:

—Հարց ու փորձ անել և իմանալ ընկերների մասին,—հրամայեց Թէոդորան:

—Լսում եմ, թագուհի,—պատասխանեց ոստիկանապետը:

—Ենթարկել նրանց ամենախիստ տանջանքի. քրքրել նրանց մսերը և եթէ չբնաստովանուեն, սաստկացնել նրանց տանջանքը:

Ոստիկանապետը դարձաւ ողջունեց և դնաց դէպի դուռը:

—Սպասի՛ր, ես փոխեցի վճիռս—աղաղակեց յետևից Թէոդորան: Ես ինքս եմ ուզում հարց ու փորձ անել նրան. բերէք ձերբակալւածին ինձ մօտ:

Անմիջապէս բերին ձերբակալւածին: Բանտում, իմանալով, որ նրան պահանջում է կայսրուհին, բանտապետները նրա ձեռքերն ու ոտները շղթայեցին, որպէս զի յանցաւորը չըկարողանար պիպչել կայսրուհու սուրբ անձին: Թէոդորան նայեց կալանաւորի վրայ և հիացաւ նրա անհամեմատ դեղեցկութիւնից, երիտասարդութիւնից և դէմքի բոլորովին անմեղ արտայայտութիւնից: Այս կինը, որ քաբասիրտ էր և ամուր ջղեր ունէր, շփոթւեց, նայելով իր առաջ կանգնած երիտասարդի վրայ:

*) Տես Տարազ № 19.

**) Յետոյ տաճիկները ս. Սոփիայի տաճարը փոփոխութեան ենթարկելով, իրանց աղօթատուն դարձրին:

—Դու շա՛տ ես արհամարում ինձ—հարցրեց Թէոդորան:

—Այո՛, պատասխանեց երիտասարդը, չընայելով Թէոդորայի վրայ,—շատ եմ արհամարում:

—Ի՞նչ եմ արել քեզ:

—Յատուկ ինձ՝ ոչինչ, բայց ուրիշներին շատ բան:

—Ուրեմն ուրիշներն են քեզ նեղացնել ինձ ատելու:

—Ոչ ո՛ք, ես ինքս: Կարող ես ինձ պատժել միայն և ուրիշ ոչ ոքի:

—Ի՞նչու չես ուզում ասել, թէ ինչու համար ես ինձ ատում:

—Ինչո՞ւ ասեմ քեզ: Աւելի լաւ է քո խղճին դիմես:

Թէոդորան ակամայ ամաչեց և իջեցրեց աչքերը: Բայց այդ միայն մէկ րոպէով էր: Անմիջապէս նա ասաց.

—Նշանակում է դու ինձ ուզում ես պատասխա՛ր: Դու դեռ երեկոյ համարձակւում ես վերցնել քեզ վրայ այն, ինչ որ պատկանում է Աստծուն: Միմիայն Նա՝ Ամենակարողը կարող է դատել թագաւորողներին:

—Չէնոց ես էլ Աստուծոյ դատաստանն եմ հրաւիրում քո յանցաւոր գլխին,—աղաղակեց երիտասարդը, համարձակ նայելով կայսրուհու վրայ:

—Դու ինձ ուզում ես համբերութիւնից հանել, երեխա, բայց ես կաշխատեմ անտարբեր լինել: Ի՞նչ է քո անունը:

—Ջիովաննի:

—Մի՞այն:

—Եթէ կամենաք, Ջիովաննի Արաբօ:

—Դու Արաբիայի՞ն ես ծնուել:

—Այո՛, յոյն ծնողներից:

—Նրանք դեռ կենդանի՞ են:

—Ո՛չ, մեռած են:

—Մինչև այժմ դու ինչով էիր պարապում:

—Ամերիկա էի, յետոյ դնացի Պարսկաստան:

—Ո՞վ բերեց քեզ այստեղ, Կոստանդնուպոլիս:

—Դա իմ գաղտնիքն է:

—Իսկ եթէ ցանկայի ես իմանալու այդ գաղտնիքը:

—Դու երբէք չես իմանայ:

—Տե՛ս, երեխաս:

—Այո՛, բայց ես՝ երեխաս կարող եմ տանել ամենասարսափելի տանջանքները, որոնց դու կըհրամայես ենթարկելու, և մի աւելորդ բառ չեմ ասի ես:

—Ո՞վ ասաց, որ քեզ ուզում եմ տանջել.

—Միթէ դու ինձ կըխնայես, երբ բոլորին էլ հալածում ես:

—Կարելի է:

—Դա ինձ համար ամենասարսափելի վիրաւորանք կըլինի: Ես չեմ ուզում բացառութիւն կազմել. հրամայիր, որ շուտով ինձ սպանեն, որովհետև ես քեզ աւելի եմ արհամարում, քան թէ մի ուրիշը:

—Դադարիր, մանուկ:

—Եթէ ես չըկարողանամ խեղդամահ անել քեզ, դոնէ պատրաստ եմ սարսափելի կերպով վիրաւորել...

—Ապա համարձակւիր,—ասաց խուլ ձայնով Թէոդորան, մօտենալով Ջիովաննին և սառած նայելով նրա վրայ:

Նա բարձրացրեց աչքերը Թէոդորայի վրայ և ապշած էր մնացել այդ զարմանալի արքայական վեհութեան և կանացի դեղեցկութեան խառնուրդից: Կայսրուհու փայլուն հայեացքը կարծես կուրացրեց նրան. նա իջեցրեց աչքերը:

—Դէհ, էլ ինչ ես կանգնել,—կատաղի՛ր քո սպառնալիքը:

Երիտասարդը լուռ կանգնած էր, գլուխը իջեցրած:

—Դու, ով երիտասարդ, աղնիւ հոգի ունես, ես այդ նկատում եմ.—ասում էր Թէոդորան,—բայց դու անփորձ ես: Միթէ կարելի է կնոջը վիրաւորել: Քեզ ասել են, որ ես բռնակալ եմ, խիստ եմ, արիւնարբու եմ, դու էլ հաւատացել ես: Բայց գիտես ինչ բան է թագի սարսափելի կարևորութիւնը: Արդեօք որ և է հասկացողութիւն ունես դու դրա մասին: Ի՞նչ գիտես, կարելի է ես աւելի եմ նեղացել դրժբախտներին տեսնելիս քան թէ ուրիշները, որոնց սարսափելի ճակատագիրը մտնում էր դահճի ձեռքը: Յայտնի է քեզ արդեօք, թէ ինչ գառն արտասուք եմ թափում ամենայն ժամ, այն կայանաւորների կրած տանջանքների մասին մտածելով, որոնք փակւած են այստեղ, պալատի բանտերում: Հաղիւ թէ դու այդպիսի բան իմանաս: Այժմ դու պէտք է հասկանաս, որ այն բոլոր սարսափելի զոհերը—պետութեան օգտի անխուսափելի պահանջն է, և ոչ թէ իմ անձնական խստութեան:

Նախկին միմանդերի մէջ էր մտել: Նրա դէմքը գունատ էր, աչքերը լիքն էր արտասուքով, ձայնի մէջ նկատւում էր համոզմունքի ոյժ: Կալանաւոր երիտասարդը նրա վրայ մի տեսակ անհասկանալի տպաւորութիւն էր թողել. Թէոդորան ուզում էր փոխել նրա միտքը, այնպէս չերևալ, ինչպէս նա նրան համարում էր: Թէ ինչու, ինքն էլ չէր կարողանում հաշիւ տալ իրան: Մի անյաղթելի ոյժ դրաւեց միմայն դէպի այն երեխան, որ հրապարակաւ նրան վիրաւորեց: Բայի դրանից Թէոդորան ուզում էր իմանալ վիրաւորողի րնկերների մասին: Ինչպէս փորձառ խուզարկու, Թէոդորան հասկանում էր, որ այդ տեսակ սարսափելի հրապարակական վիրաւորանք հասցնել նորին մեծութեան, անձամբ երիտասարդը, առանց կոմունակի աղդեցութեան, չէր կարող ընդունակ լինել: Այնուհետև փորձառու Թէոդորան իսկոյն հասկացաւ Ջիովաննիին. նա իր մէջ խոստովանում էր, որ անկարելի է Ջիովաննիից իմանալ տանջելով նրան: Այդ քնքոյշ և կնանման երիտասարդը, ինչպէս նկատւում էր, կամքի տէր էր և վճռել էր ընդունելու մահւան բոլոր տանջանքները: Սկզբում Թէոդորան կոմեդիան խաղում էր կարծես թատրոնի բեմի վրայ, բայց յետոյ, մերթ

ընդ մերթ, դրաւեց, նրա մէջ արթնացաւ այնպիսի զգայմունք, որ մինչև այժմ չէր փորձել։ Սկզբում նրա աչքերը շանթեր էին արձակում, իսկ յետոյ նկատեցաւ արտասուք։ Երիտասարդը ակամայ սիրահարեց նրա վրայ և ասաց.

—Այժմ, երբ ես քեզ տեսնում եմ, դու ինձ այլ ևս սարսափելի չես թւում, ինչպէս առաջ։ Քո սքանչելի աչքերը, ներդաշնակ ձայնը և դէմքի վեհ գեղեցկութիւնը չեն կարող թաքցնել արիւնածարաւ բռնակալ կնոջը։ Բայց ինչու, ասա ինձ... Ահա ինչպէս տեսնում ես, ես եկել եմ Կոստանդնուպոլիս, վրէժխնդիր լինելու իմ բարեկամից, որին դու ենթարկեցիր սարսափելի տանջանքների։ Եթէ իմ դիտաւորութիւնը չըյաջողեցրի ի կատար ածելու, չեմ կարող արդեօք ես ներդործել, որպէսզի թեթևացնեն իմ ընկերոջ տանջանքները։

—Նրա անունը։

—Ֆացիո։

—Դու շա՞տ ես սիրում նրան։

—Օ՜, այո, ծնողական փաղաքշանքից զուրկ, ես Ֆացիոյի մէջ գտայ հարազատ հօրս։ Նա ինձ համար ամեն բան էր. և հայրենիք, և բարեկամ, և հայր։ Նրա համար ես երդւել եմ տալ իմ արեան վերջին կաթիլը։

Այս խոստովանութեան ժամանակ Թէոդորայի դէմքը աւելի և աւելի խիստ արտայայտութիւն ստացաւ։ Վերջապէս նա սառը կերպով հարցրեց.

—Դու հէնց դրա համա՞ր ես եկել Կոստանդնուպոլիս։ Իսկ դու ընկերներ չունէիր։

—Ո՛չ ոք,—վճռական կերպով պատասխանեց երիտասարդը։

—Ես քեզ հաւատում եմ,—պատասխանեց Թէոդորան։

—Ուրեմն ես այժմ կարող եմ... սկսեց երիտասարդը։

—Այժմ ես գիտեմ, թէ ինչ պէտք է անել,—յանդուգն կերպով ընդհատեց նրան կայսրուհին, և բաց անելով դուռը, աղաղակեց.—Էյ, պահապաններ, տարէք կալանաւորին բանտ։

(Կըշարունակի)

Կ. Պոլիս. Այա Սոփիա մզկիթը

ՍԵՒ ՄՏՔԵՐ

(Նւէր Մ-ին)

Հիւանդ, անկողնում ընկած ժամերիս
Անհարիս վրայ եմ ես մտածում.
Ծանր, սեւ մտեր են գլուխս գալիս
Եւ սիրտս նվում է ու խիստ հեծեծում։
Ո՜րճան անվեհեր եմ ես այս կեանքումը,
Քաջ իրեւ առիւծ, իմաստուն զերթ օձ,
Դրամս ապահով դրած բանկումը,
Խօսքս միշտ կտրուկ, զէնքս ոսկեզօծ։
Բարեկամ մարդիկ անհամար, անթիւ.
Գլուխ վեր բերող, էլ ի՞նչ ես ասեմ՝
Աչ—ձախ բաժնում են ինձ յարգ եւ պատիւ.
Աչքովս եմ տեսնում, ի՛նչպէս բամբասեմ։
Դեղեցիկ սեռը ժպիտն երեսին՝
Բացում է դուռս, ինձ այցի գալիս,
Խօսք է բաց անում... կանգ առնում կիսին
Միւս կիսի տեղակ, պինդ համբոյր տալիս։
Կառքս դրանս, գոյգ ձիանիք լծած,
Շիանց դռիիւնը հեռւից ես լսում.
Փուած կառապանս խիտ մօրթով ճնշած
Իմ *գնա* խօսքին է միայն սպասում։
Պարտէզս ուրախ, ծառերս զարթ,
Շատրւան, առու խշշում, էչէչում.
Շուրանս ծաղիկը եւ սոխակ եւ վարդ
Ծիծաղում, երգում, կեանքի են կոչում։
Դեղեցիկ կինս՝ սիրող եւ սիրուող
Հրեշտակ զաւակուիք՝ փայփայող, փայլող,
Ամենքն էլ ուրախ, երջանիկ ապրում,
Ինձ յաւէտ բախտի մասին խոսանում։
Բայց *վաղը* կըգան ծովու խոովայոյզ
Հօթաբեր հողմեր, փոթորիկ, մրրիկ,
Կառնուն ճաւասից խեղճի վերջին յոյս
Նաւը կըլափի կատաղած ալիք։
(Անա՛ լսում եմ դժոխքի ձայնը՝)
Դէ՛ ջարդւիր, հսկայ, անդունդ խորտակւիր,
Օրերդ անցու թէկուզ դրախտում
Միայն մի պատժով պիտ՝ ես քեզ պատժեմ,
Ամբողջ ո՛ն կեանքը՝ միայնակ թողնեմ։
Մահու պատկերն է առաջիս կանգնած,
Սեւ արծւի նման թեւերը բացած.
Սուր նիրանիներով պատրաստ է նեղել,
Մի ակնթարթում սիրտս կեղեքել։
Ողորմած Աստո՜ծ, ինչո՞ւ դու այսպէս
Աչքից գցել ես մարդ արարածիդ,
Ինչո՞ւ չարեցիր մի կերպ այլապէս՝
Խեղճը համակից լինէր ո՛ն փառքիդ։



Գ ա ց ա ա կ. Մզկիթի հրապարակը

Ինչո՞ւ խլեցիր բախտն այս աշխարհէն,
Ինչո՞ւ ցաւեցիր թշուառ սերմերէն.
Սէրը, հաճգիստը ինչո՞ւ դու առար,
Անվրդով կեանքը ինչո՞ւ զլացար։

Սեւ սուգը, սեւ օր մեզ արժան տեսար.
Տանջանք ու կսկիծ բաժին հանեցիր.
Սով, սրածութիւնք, կեղեքմունք, զրկանք
Ամենն անխնայ, առատ բաշխեցիր։

Այսքան մեծ հոգի, այսչափ ծով մտեր,
Այսչափ զգացմունք, դարեւոր յոյսեր՝
Ինչո՞ւ ես մեռցնում, ինչո՞ւ փչացնում,
Ինչո՞ւ, Տէր Աստուած, դու հող դարձնում։

Ընդունի՛ր մաղթանք, անհա՛ս Ստեղծող,
Ինչեւիւայ պահուն մահուան անկողնից՝
Ես երես փակում եմ, ես հուն եմ մտնում,
Դու գիտես, հոգիս fո ձեռքն եմ յանձնում։

24 նոյեմ. 93.
Թիֆլիս

Սաւուճարոլա

ՋՐՆԵՒՈՒՀԻՆԵՐ

— Ա՛խ, ինչ աղուոր է այսօր օդը։ Մայիսի հալած՝ անուշ ցոլքերով կապոյտ երկինք մը, որուն վրայ կ'երկննան ամպի թեթեւ քուլաներ յոյլ ընկողմանումով մը ու իրանց թոյլ ստւերները կը փռեն զմրուխտէ դաշտերուն մէջ Սալէպի հպարտ սարին վրայ։

Կէս օրի հրաշէկ արեւը, լոյսի ջինջ ու լայն ալիք մը կ'նետէ մէջտեղին մէջ, որ խնկաւած է եղեւնաններու, լէյլակներու, դաշտի ու լեռներու վայրի ծաղիկներու բուրումներովը։

Պզտիկ, չարաճճի հով մըն ալ հարուստ կանաչով մը ծաղկած ծառերու լայն սաղարթները կը թեթեւացնէ, անոնց դաղտուկ, անծանօթ բաներ մը մրմնջել կուտայ, օդին մէջ կը բարձրանայ, կը հասնի մինչեւ ամպերը, ու կը սկսի անոնց ձիւնի պէս ճերմակ բաշերուն հետ խաղալ։ Զանոնց կը դարտղնէ, կը քակէ, կանօսրացնէ ու յետոյ խինդ քմահաճոյքով մը, իր անդադրում խարազանումին տակ, նորէն իրար կը հաւաքէ, կը խտացնէ, բամբակի խոշոր քուլաներ կը շինէ, տեղ տեղ վոխադրելով։

Ամբողջ բնութիւնը անսահման ծիծաղով մը կը խնդայ կարծես ու իր ասպնջական ծոցին մէջ կը հրաւիրէ ամեն անոնք՝ որ շաբաթան մը ցաւագին աշխատութիւններէն յոգնած են ու իրանց հոգին՝ ծարաւը կը զգայ անդորրութեան, և ուժասպառ մարմինն ալ՝ հանգիստի։

*ԺՐՆԵՒՈՒՀԻՆԵՐՆ ու ԺՐՆԵՒՑԻՆԵՐԸ բնութեան սիրուն հրաւէրը բարձի թողի չեն ըներ. ամենքն ալ հագուած՝ պարզ ու ճաշակաւոր արդու զարդով մը և փութկոտութեամբ մը, որ շատ տենդոտ բան մը ունի իր մէջ, դուրս կ'ընեատւեն իրանց տուներէն ու կերթան իրանց խաղաղ հոգիին յատուկ երազանքները պտըտցնել, լճակին ափերուն վրայ կամ հանրային պարտէզներու լուռ ստւերներուն տակ։

* * *

Ո՜վ պիտի տայ սակայն, հանգիստը մեր խռոված հոգիին! Ո՛չ բնութեան դղրիհիչ հրապոյրները, ո՛չ արեւին պայծառ ուրախութիւնը, չեն կրնար խաղաղել վրդովմունքը մեր չարչարչուած հոգիին։ Որովհետեւ մեր ցաւն ու տխրութիւնը իր խորունկ արմատն ունի, հեռուն, բարբարոս կառավարութեան մը սարսափներուն տակ հալող՝ մեր եղբայրներուն ցաւին ու տխրութեան մէջ։

Մեր ցաւը, իր աղբիւրին մէջ միայն կրնայ ցամքել, ու մեր տխրութիւնը՝ իր արմատին մէջ։

Երբ կը խորհինք, թէ աշխարհի մէջ, մարդ եթէ ոչ երջանիկ, գէթ կրնայ համեմատաբար խաղաղ, հանգիստ կեանքով մը ապրիլ խաղաղ երկրի մը մէջ, կրնայ մտքի ու սրտի հաճոյքներ վայելել, հաճոյք մը որ էն անուշն է ու էն ուժովը ամեն հաճոյքներուն. ու երբ ընդհակառակը կը տեսնենք թէ այդ կեանքն ու հաճոյքները քու հարազատ եղբայրներուդ համար չեն, թէ անոնք աշխարհի էն քմահաճ իշխանութեան տակ այնպիսի ահաւոր կեանք մը կը քաշկռտեն որ նոյն իսկ անբաններու կեանքին նախանձել կուտայ, որքա՛ն ցաւագին կը լայ զգայութիւնը քու հանդարտ կեանքիդ ու որքա՛ն ցաւատանջ՝ այդ հակասութիւնը։

Չուրջդ տրտղող վարթութիւնը, քու թախծութիւնդ զմեղմելէ զատ աւելի կը խորտնկացնէ, աւելի կը խտացնէ։ Դէմքերը որ կանցնեն քովէդ ուրախ, երջանիկ, մաքուր ծիծաղով մը ծաղկած՝ աւելի ուժով դուրս կը ցոլացնեն հակասութիւնը տխուր, պրկուած ու դառնացած դէմքերուն, որ կարծես յաւիտենական Գիշերի մը մէջ ապրած են, ճերմակ սարսափներու տակ, չըճանչնալով արեւը կեանքին ու հանդարտութիւնը հոգիին։

Ու այդ հակասութիւնը որքան ուժգին կը ճնշէ, որքա՛ն կատաղօրէն կը ճզմէ քեզ, որ չիմարութեան վայրկեանի մը մէջ, կը սկսես ատել այդ երջանիկները, քու արհամարկոտ լիմար ընթացքովդ նախատելով դանոնց, թէպէտ և անոնք քեզի բան մը ըրած չըլ-

լան ու իրանց մէջ կրեն հոգի մը անուշ, անհունապէս բարի, հոգի մը անբիծ շուշանէ!

*
* *

Ահա թէ ինչու համար այսօր սենեկէս դուրս չելայ, այցելելու համար ծերնէփ հրաշալի լճակին՝ որ իր գարունի կապոյտ թաւիշէ շրջազգեստն հագած՝ կընդրկիտայ, իր դաշնակաւոր ֆրու-ֆրուներու աղմուկով լեցնելով ափունքը, և կամ երթալու Պասթիօն՝ ուր երաժշտութիւն մը իր երբեմն տխուր ու երբեմն ալ զուարթ ու ցատքռտուն խաղերը կընթաւալէ անընդհատ:

Իմ սենեկիս քիչ մը խորհրդաւոր մուխը, շատ աւելի դուր կուգայ իմ հոգեկան տրամադրութիւններուս, և առանձնացած, մենակ կեանքն իմ մտքի վիճակիս՝ որ մթնած է արդէն ու մութի մէջ բաւականութիւն կըգտնէ, ինչպէս սգաւոր մը իր սեւ շորերուն տակ:

Բազմոցիս վրայ ինկած՝ ինքզինքս իմ խօլ մըտածմունքներուս կըյանձնեմ որոնք բաց թողած տունէ մը ներս խուժող աւազակներու պէս կըյարհակին ուղեղիս վրայ, հակառակ իմ թոյլ դիմադրութիւններուս:

...Իրա՞ւ արդեօք La raison du plus fort et toujours la meilleure?

Իրա՞ւ արդեօք մենք պէտք է չարչարւենք ատոր համար որ տկար ենք և հետևաբար արժանի?

Իրա՞ւ է թէ բնութեան այդ օրէնքը, Ուժի օրէնքը պէտք է թագաւորէ մեր կեանքին մէջ, ինչպէս կըպնդեն շատեր?

Բայց ան ատեն ո՞ւր կըմնայ մեր գիտակցութիւնը (conscience), Բարիին, Չարիին տարբերութեան ըմբռնումը? Ցետոյ այն անսահման բողոքները, ըմբոստացումներն ու ընդվզումները Բնութեան անիրաւութիւններուն դէմ, ինչ կընշանակեն ատոնք:

Գիտութիւնը, բնութեան հակառակ ուժերուն դէմ մարտնչումը, աւելորդ, փուչ աշխատութիւններ են. Գիտութեան ռահվերաններու հրաշալի մարտիրոսութիւնը, զուր նահատակութիւն է:

Այն բարի ու անուշ հոգիները, որ ուրիշ բանի համար ստեղծած չեն կարծես, բայց եթէ տառապողներուն, ինկածներուն, անժառանգներուն համար ձայն բարձրացնելու, անոնց օգնութեան ձեռք մեկնելու, այդ հոգիներու դոյութիւնը, սխալ երևոյթ մըն է աշխարհի վրայ:

Քաղաքակրթութիւնը, հեղնութիւն մը, քթի խնդացող բա՞ւ մը? Ի՞նչ են ամեն անոնք, ինչպէս բացատրել այս իրողութիւնները, երևոյթները, որոնք անհրաժեշտ լուծում մը կըպահանջեն:

—Չէ, այն սխալ վարդապետութիւնը թէ մարդ պէտք է տառապի անոր համար որ բնութեան օրէնքն է այդ, թէ տկարները պէտք է չարչարւեն, տանջւեն որովհետև ատիկա անխուսափելի է, այդ հրէշային վարդապետութիւնը, սև հոգիներու յղացումն է զուտ, ատոնք ամենքը Չակոներ են, որ իրանց հոգիին երջանկութիւնը, սփոփանքը ուրիշներու երջանկութեան փլատակներուն վրայ կըբարձրացնեն, անոնց չարչարանքին ու անոնց զրկանքներուն մէջ: Անոր համար որ ատոնց Մարդը, Բնութիւնը, Աշխարհը իր ամբողջութեան մէջ չեն ճանչցած, ուրիշին վիշտը թեթևցնելու աստւածային հեշտանքը չեն վայելած, անոր համար որ բառին լայն առումովը սիրել չեն գիտցած! Գժբախտութիւն մընէ ասիկա! բայց և այնպէս բացառութիւններ են ատոնք ու, եթէ բացառութիւններ չեն, մաղթենք որ բացառութիւնները ըլլան!

Մարդը բաւական կըտառապի արդէն իր այս զմուռ (chéitve) կեանքին մէջ, բնութեան անիրաւութիւններէն, խելոք քմահաճոյքներէն, զրկանքներէն: Չերիք չէ՞ ատիկա արդէն: Երկու անհունութիւններու, կամ երկու ահաւոր ոչինչներու մէջտեղ առկախ քանի մը գիտակից վայրկեաններ, կեանքը ըսել կուզեմ, բաւական տխուր, բաւական ցաւագին չէ՞ք գտներ արդէն:

Մարդկութեան սրբազան պարտքն է Բնութեան անիրաւութիւնները, զրկանքները մեղմելու գործը: Գիտութիւնը որ դարուս ճշմարիտ կրօնքը դարձած է, այդ նպատակն ունի ու այդ բանին կըձգտի անխոտոր: Այդպէս խորհած են աշխարհիս էն հոյակապ, էն ուժով, էն ճշմարտապէս մարդասէր մտքերը, ու այդպէս սլիտի խորհեն ասկէ վերջն ալ:

Բարիզի Bazar de la Charité-ի ահաւոր, անլսելի աղէտքը իր տխուր ահմէութիւնով անգամ մըն ալ կուգայ շատ ուժով ու շատ ցաւագին կերպով յիշեցնել մեզի թէ այս աշխարհը, աշխարհն է դերազանց դժբախտութեանց. և թէ մարդիկ, աստւածային պատականութիւն մը ունենն աջակցելու իրարու, ինկածին, տառապողին, գերիին օգնութեան հասնելու և կրթելադէպ մեզի էն խորապէս ազնիւ ու էն բարձրօրէն բարի բաները:

Ժ ը ն ե ւ. **Տիգրան Սլկուճի**

Երգիծաբանական

ՄՈՒՏՔԱՆ ԷՋԵՐ

Համայնագէտ—ունայնագէտ

Դժուար չէ տեսնել այսօր ստուար թիւով ազգային երիտասարդներ որ յաւակնութիւն ունին գիտնալու տաճկերէն, ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն, իտալերէն, բնական գիտութիւն, քիմիաբանութիւն, բնական պատմութիւն, փիլիսոփայութիւն, աստղագիտութիւն, գրահաշիւ, գրականութիւն. իսկ երբ այդ գիտցած լեզուներուն միով երկու տող բան մը գրելու հրաւիրուի՝ կասկարմիր կըկտրի և գրիչը ձեռքէն կ'իյնայ. նոյնպէս ուսած...ութիւններուն վրայ հարցում մ'ուղղուի, պայմանաժամ կըխնդրէ պատասխանելու համար։ Մինչ երկու ամբողջն տասը քառորդներէն աւելի չմրժէր—խնդիրն ոսկու վրայ չէ։—

Կըզգանք թէ մեր ազգին մէջ վաճառականաց թուոյն նուազութեան պատճառաւ շատ երիտասարդներ անգործ կըմնան, այսու ամենայնիւ համոզուած ենք թէ այդ երիտասարդներն եթէ կարող ըլլային երկու օտար լեզուով տոմարակալութիւն ու թղթակցութիւն ընել՝ պիտի կրնային օտար վաճառականաց վրայ պաշտօն գտնել։ Ազգային վարժարանք նկատողութեան առնելու են այս կէտն և այն ուսման առաջնութիւն տալու են, որք աւելի օգտակար և կարևորն են մեր երիտասարդաց հայ ընձեռելու համար։ Այսպէս դաշնակն, երգն ու պարը շատ ետ մնալու են կար կարելոյ արհեստէն. նոյնպէս աւելորդ լեզուներն, փիլիսոփայութիւնն, աստղագիտութիւնն, բնական պատմութիւնն հետևելու են հայերէնի, ազգ. կրօնի ու պատմութեան, տաճկերէնի ու ֆրանսերէնի կամ անգլիերէնի ու թւաբանութեան և այլն. և այդ մնացած...ութիւններն անոնց միայն աւանդելու է, որք նիւթական կարողութիւն ունին զանոնք կատարելագործելու։ Այս դրութեամբ կրնանք, ըստ մեր խոնարհ կարծեաց, փրկել երիտասարդութիւնն անգործութեան ճիրաններէն։

Մեր թաղային վարժարանաց այժմու ընթացքն մեր ընթերցողաց առջև պատկերելու համար արժան կըդատինք հոս դնել պզտիկ խօսակցութիւն մը որ տեղի ունեցած է երիտասարդի մը ու վաճառականի մը մէջ տեղ։

—Տղաս, ֆրանսերէն գիտե՞ս։

—Այո, տէր... ֆրանսերէն գրականութիւն ալ գիտեմ։

—Երկու տող նամակ մը ունիմ գրելու Մարսելիա, կրնա՞ք գրել ֆրանսերէն։

—Ո՛չ, բայց կրնամ հարիւր տող բերնուց ըսել ձեզ Վիգթոր Իւկոյի էրնանիեն կամ Մոլիէռի Միզանթրոբեն...

—Պիտի գրէք այսօր նաև մի հաճար ղրկած եմ իրան և ֆոնոսմենթոն նամակին մէջ փակած եմ։

—Հանճար, ահ... ինչ հիանալի կատակերգութիւն է այդ Միզանթրոբը... հապա էրնանի՞ն...

—Կրնա՞ք գրել նամակը։

—Ո՛չ, ներեցէք ինձ յայտնելու թէ այդ թատերգութիւնները կարգացողն չի զիջաներ մինչև նամակագրութիւն խոնարհելու։

—Աղէկ, տղաս, աղէկ կըխօսիս, բայց վաճառականութեան մէջ նամակներն ոչ էրնանիեն կընդօրինակուին, ոչ ալ...

—Դիտեմ. հաճեցէք ուրեմն շնորհել ինձի քառասուն ոսկի որ սա Միզանթրոբը թարգմանեմ ու ազգին ճանչցնեմ։

—Տոմարակալութիւն գիտե՞ք։

—Ո՛չ։

—Տաճկերէն։

—Գիտեմ, բայց ուղղագրութիւն չունիմ, հոգեբանութիւն գիտեմ, տրամաբանութիւն գիտեմ ու...

—Կըցաւիմ որ...

—Եթէ գոհացուցիչ ամսական մը խոստանա՞ք՝ երկու օրւան մէջ կրնամ տոմարակալութիւն գիտնալ, սկզբունքներն արդէն ըմբռնած եմ։

—Թւաբանութիւն գիտե՞ս. տոկոսի խնդիրներն կրնա՞ս լուծել։

—Տոկոսի խնդիրները չեմ կրնար լուծել, բայց աղէկ մարմնամարզութիւն գիտեմ։

—Ազգային վաճառականներէն ո՛վ կըճանչնաս, որոնց վաճառատունը գիտես։

—Այս փողոցներն աղէկ չեմ գիտեր, բայց, առաջ Աստուած, կրնամ պատասխանել եթէ հարցում մը ուղղի ինձի աստղագիտութեան վրայ... կրնամ ըսել թէ Արուսեակն ի՞րը կըծագի և ո՞ւր կըկենայ։

—Չատ աղէկ, տղաս, շատ աղէկ, չարմար գործ մը ըլլայ նէ՝ ես խապար կուտամ քեզի։

—Ինչ մ'ալ անգլիերէն գիտեմ, բայց բայց ոչ կրնամ գրել, ոչ ալ խօսել. հնչումը դժուար է այս լեզուին։

—Ապրիս, տղաս, ապրիս։

—Մեզի գործ մը, էֆէնդի։

—Ի՞նչ գործ տամ քեզի, տղաս։

—Ֆրանսերէն սորվեցնեմ քեզի որ էրնանիեն կարդաս...

—Եօթանասունէն վերջը չեմ կրնար սորվել... ես խապար կուտամ քեզի գործ մը ըլլայ նէ։

—Դպրոցէն ելեր եմ, պարո՛ պըտրտիմ, էֆէնդի մեղք չէ՞ ինձի։

—Ի՞նչ ընեմ, տղաս, գործիս չես գար դուն։

—Այսչափ բան գիտնալովս գործիդ չեմ գար։

—Ոչ։ Ամեն բան սորվել ուզեր ես և ապրելու համար հարկաւոր եղած բաները չես սորուած, տղաս։

—Միզանթրոբին չէ՞ս հաւներ։

—Ընտի՞ր։

—Էրնանին ղէշ է։

—Պատւակա՞ն։

—Մարմնամարզութիւնն որո՞ւ կարիք հասցուցած է։

—Եւ ոչ մէկուն։

—Ինչո՞ւ ուրեմն ձեր վաճառատան մէջ գործ մը չեք տար ինձի. հայր մը, մայր մը ունիմ որոնց հոգը իմ վրաս է. հաց կուզեն անոնք, էֆէնդի։

—Գնա՛ քիչ մը Միզանթրոբը կարդա՛, քիչ մ'ալ մարմնամարզութիւն ըրէ, կըկշտանան կերթայ։

—Բարեհաճեցեք, էֆէնդի, գոնէ դպրոց մը գրէք գլխս որ վարժապետութիւն ընեմ։

—Չատ աղէկ, բարեկամներուս ըսեմ ու...

—Խարճլըխ ալ չունեմ, գոնէ ոսկի մը տայիք որ...

—Ա՛ռ ոսկի մը։

—Չնորհակալ եմ (կրմեկնի)։

—Աս ինչ փորձանք է եղեր...

—Մոռցայ ըսելու որ աղէկ քատրիլ խաղալ ալ գիտեմ, կըսէ երիտասարդը, վերստին ներս մտնելով։

—Ապրիս, ապրիս։

—Գծագրութիւն ալ կուգայ ձեռքէս... ընտիր բիյզաժներ կըգծեմ։

—Աղէկ, աղէկ։

—Մի՞ մոռնար ինձի, էֆէնդի։

—Չեմ մոռնար։

—Ձեր գործած բարեաց չիշատակը

սրտիս մէջ, սրտիս խորը անջինջ պիտի պահեմ, էֆէնդի, կենացս մինչև վերջին շունչը։

—Շատ աղէկ։

—Պիտի հռչակեմ աշխարհի թէ հազուագիւտ անձնաւորութիւն մ'էք դուք։

—Չնորհակալ եմ։

—Ծառայ եմ։

—Երթաք բարով։

Ահաւասիկ քացխաճ երիտասարդ մ'որ վարժապետութեան մէջ փնտռելու կ'երթայ իր հացն եթէ կարենայ կատարելագործել ինչ որ կրկարճէ գիտնալ։

Ուսումնական խորհրդոյ պարտքն է ուրեմն ձեռնհաս անձերու խորհրդակցութեամբ ուսմանց ծրագիր մը պատրաստել մայրաքաղաքիս վարժարանաց համար, ծրագիր մ'որ կարենայ գործադրել գաւառաց մէջ իսկ, այն փոփոխութեամբք զորս իւրաքանչիւր գաւառի վաճառականական, երկրագործական և արհեստական պահանջմունքը զդալի կընեն։

† Ե. Ե. Պատրոնեան

Անթիպ

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն

Այս անցկացած շաբաթ ամեն օր նոր պիէսներ ներկայացրեց ռուս դրամատիկ խումբը, բացի հինգշաբթի օրից, որ խաղացին չորրորդ անգամ Տրիլբի դրաման։ Յաւում ենք, որ մեր հանդիսի էջերը թոյլ չեն տալիս մեզ աւելի մանրամասն խօսել անցկացած շաբաթ ներկայացրած պիէսների մասին։

Երկուշաբթի խաղացին Ա. Դիւմայի (որդի) Les idées de M-me Aubrauy պիէսը։ Սա չորս գործողութիւնից մի կոմեդիա է։ Տ. Օբրէ կեանքի մասին որոշ հայեացքներ ունի։ Նրա համոզմունքով եթէ մարդիկ վատ, չար գործեր են անում, մեղաւոր չեն, այլ այդ մի տեսակ հիւանդութիւն է, որ պէտք է բժշկել։ Մասամբ կարող ենք հաշտուել այդի Օբրէի հետ, որ տգիտութիւնը՝ խելքի, սրտի, զգացումների չոռի զարգացումն է մարդուս չանգանք գործել տուողը, թէև ի հարկէ ոչ միշտ, սակայն լինչով բացատրել տգիտանգաւոր դրամատուրգ Ա. Դիւմայի այդքան անփոյթ այդ տեսակ մի բեմական գրւածք հրապարակ հանելը։ Գործողութիւն այդ կոմեդիայի մէջ համարեա թէ չկայ։ Բեմը բաբեդործական հիմնարկութեան բիւրոյի տպաւորութիւն է թողնում։ Շատ ձգձգած է պիէսը, մէկ կամ երկու գործողութեան մէջ էլ կարող էր հեղինակը ամփոփել այդի Օբրէի հայեացքները։

Երեքշաբթի ներկայացրին տ. Իւրեւայի բենեֆիսին Դոսլաւսկու աւելի անհամ *Подорожник* կոմեդիան 4 գործողութիւնով։

Թատրոնը համարեա լիքն էր։ Տ. Իւրեւային հասարակութիւնը շատ օւասիօն արաւ, որին նա ըստ ամենայնի արժանի է։ Մի քանի ընծաներ և ծաղիկներով լի կողովներ, ծաղկեքնար, ծաղկեփնջեր էլ ստացաւ։

Հեղինակը իր շինութեան հիմքը վերցրել էր մի դաստիարակչուհի (տ. Իւրեւա), որի շրջապատողները նայում էին իբրև մի վարձկանի վրայ և թոյլ էին տալիս իրանց կրքերի ապաստանարան որոնել անպաշտպան մի օրիորդի զգացումների մէջ։ Դրանց շրջանում ազնիւ մարդիկ էլ կային, բայց նրանցից մէկը դեռահաս դիմնազիստ էր, միւսը ոչ հասասար զոյգ դաստիարակչուհուն, երրորդը կրթւած, հարուստ և վայելում էր նոյն իսկ դաստիարակչուհու չարգանքն ու համակրութիւնը։ Բայց հեղինակը մի թիւրիմացութիւն առաջ բերելով, զրկում է երկու սիրող երիտասարդներին միանալու ամուսնական կապերով։ Հարուստ, կրթւած երիտասարդը գրաւոր առաջարկութիւն է անում դաստիարակչուհուն, հրաւիրում իր մօտ (նրան սաստիկ ճնշում, հարստահարում, անպատւում էին իր եղած ընտանիքում)։

Բայց որովհետև ամուսնանալու մասին խօսք չի լինում նամակում, դաստիարակչուհին ենթադրելով, որ իր իդէալիստ բարեկամն էլ ստոր, անասնական կրքերից դրդւած առաջարկ է անում, չի պատասխանում նրա նամակին և պատահած ժամանակն էլ վիրաւորում, ծաղրում է նրան հրապարակաւ։

Վերջը թէև թիւրիմացութիւնը պարզւում է, նրանք հաշտւում են և նշանւում, սակայն պսակը չի կայանում։ Դաստիարակչուհուն զրպարտում են յետին մտքերով. փեսան տատանւում է, հարսնացուից բացատրութիւն է պահանջում, բայց սա իր անմեղութեան վկայ է բերում միայն Աստծուն։ Այս անգամ էլ զրպարտիչները իրանք խոստովանում են դաստիարակչուհու անարատութիւնն ու արդարութիւնը և իրանց յետին մտքերով նրան ամբաստանելու շարժառիթները, սակայն ազնիւ դաստիարակչուհին բացէբաց հրաժարւում է ամուսնանալ իր թերահաւատ փեսացուի հետ և հեռանում է այնտեղից, ուղի ընկնելով յայնատարած Ռուսիայի մի անկիւնում արդար աշխատանք գտնելու։

Թերասանական խումբն այդ պիէսն էլ կատարեց յաջողութեամբ, մանաւանդ կանայք լաւ էին։ Իսկ տ. Իւրեւա դաստիարակչուհու տիպը ներկայացրեց վայելուչ։

Չորեքշաբթի Խարկովի տղքատ ուսանողների օգտին Ի. Օժրեի *Les Fourchambault* 5 գործ. կոմեդիան տրւեց։

Հինգշաբթի չորրորդ անգամ Տրիլբին ներկայացրին։ Երէկ ստացած մեր մի հանդիսի մէջ կարդում ենք, որ Անգլիայում Տրիլբին Ջէքսպիրի պիէսներից յետոյ ամենասպասուելարն է։

Անգլիական թատրոնական մի հանդիսի յատուկ կրիտիկոս երկար հետազօտութիւնից յետոյ չհաշտակելով այդ պիէսի յաջողութիւնը, ի միջի այլոց ասում է, որ այդ գրւածքի շնորհիւ Անգլիայում մի ընկերութիւն է հաստատւել Trilby Society, որ դժբախտ անպաշտպան օրիորդներին հովանաւորում է։ Մինչև անգամ պարահանդէսներում Տրիլբի պիէսի հերոսների զգեստներ են հագնում։

Լեոնկօալլոյին նոր օպերա է յօրինում Տրիլբի դրաման նիւթ վերցնելով։

Ուրբաթ խաղացին պ. Բաղրովի բենեֆիսին Վ. Հիւգօի Էսմեռալդի դրաման 5 գործ.։ Այդ պիէսը Ռուսիայում, բացի երկու մայրաքաղաքներից, արգելւած է եղել մինչև այժմ ներկայացնել և Թիֆլիսում առաջին անգամ տրւեց յաջողութեամբ։ Պ. Բաղրովին էլ լաւ ցոյցեր արաւ հասարակութիւնը։

Վաղը, երկուշաբթի դարձեալ մի նոր, պատմական և հետաքրքիր պիէս է ներկայացնւում՝ *Разгромъ* պ. Գնեդիչի հեղինակութիւն։

—

Անցեալ չորեքշաբթի Կայսերական թատրոնների երգիչ պ. Ռ. Ամիրջանեան տւաւ Ազնւականների թատրոնում իր առաջին կոնցերտը։ Երաժշտասէր մեր հասարակութիւնը չէր

եկել լսելու իր հայրենակիցին, այլ թատրոն էին եկել երգչի բարեկամները և մասամբ նրանք, որոնք հետաքրքրւում են հայ տաղանդներով։ Ներկայ չէր ոչ մի ռուս, ոչ մի վրացի։ Ահա թէ Թիֆլիսի պէս մի մեծ քաղաքում ինտելիգենցիան ինչպէս է վերաբերւում դէպի գեղարւեստը, երբ նրա ներկայացուցիչը մի օտարական չէ։ Մենք հեռու ենք դեռ բարիտոն Ամիրջանեանին վերագրելու այն դովասանքները, որ երիտասարդ երգչին այնքան շռայլել են եւրոպական և մայրաքաղաքի թերթերը։ Մի քանի շաբաթ առաջ մենք տպագրեցինք Տարազում Պետերբուրգի մեր թղթակցի նամակը սլ. Ամիրջանեանի կոնցերտի մասին. այնտեղ շեշտւած էր և նշանաւոր կրիտիկոս Սոլօւեւի խորհրդաւորութիւնը սլ. Ֆ. Ամիրջանեանի ձայնի մասին։ Մենք կարծում ենք, որ օտար, անաչառ կրիտիկոսները մեր տաղանդներին աւելի են բարձր գնահատում, որովհետև ի նկատի ունեն այդ տաղանդներին շրջապատող հանգամանքները։ Սակայն մենք իրաւունք չենք համարում մեզ այդպէս դատել։ Մենք հայից, գիտութեան և արւեստի որ շրջանումն էլ լինելու լինի նա, կըսպասենք համահաւասար այն առաջադիմութիւնը, ինչ տարօրինակ չէր լինիլ պահանջել մի ամենաքաղաքակիրթ ազգի զաւակից։ Չայի հազարաւոր տարիների անցեալը, նրա կատարած դերը, մարդկային առաջադիմութեան համար բերած դոհաբերութիւններր, իրաւունք են տալիս մեզ այդ ասելու։ Լոնդոնի, Պարիզի գեղագիտական շրջաններում մեծ յարգի դաշնակահար սլ. Սվանեան, տիեզերաքոյչակ նկարիչ Այւազովսկի և այլն և այլն, մի՞թէ այսօր մեծ չեն և այդ տաղանդները չեն չափւումընդհանուր մաշտաբով, թէ գործ է գրւում համեմատականը, պարագաներն ու հանգամանքներն էլ նկատի առած։

Այս տեսակէտից ահա մենք նայում ենք և սլ. Ամիրջանեանի վրայ։ Նրա բարիտոնը շատ հարթ է, մանաւանդ հզօր, զգայուն է և երգում է նա մուզիկալ, սակայն հում նոտաները շատ են, մանիերը, ելևէջները, առոգանութիւնը գեղեցիկ չեն։ Կատարելագործւած արտիստի և երգչի տպաւորութիւն չէ թողնում։ Մենք կըցանկայինք, որ սլ. Ամիրջանեան, մանաւանդ այսուհետև, երբ լաւ շաւղի վրայ է դնում, ամենախստ եռանդով շարունակէ կրթել իր ճաշակը, արտասանութիւնը, մանիերները և նամանաւանդ իր հզօր ձայնը, արմատախիլ անելով նրա մէջից այն անճոռնի հնչիւնները, որ նրա հրաշալի ձայնից այնքան վատ լսւում են։

Պ. Ամիրջանեան մի լաւ յատկութիւն էլ ունի. նա իր մի քանի ընկերների նման շուտով չի մոռանում իրան և իրայիններին։ Այդ ուրախալի երեւոյթ է։ Ես սրան ասացուցց, որ առաջիկայ երեքշաբթի օրը հայ դերասանական խմբի ներկայացման մասնակցելու է և սլ. Ամիրջանեան, երգելով դլխաւորապէս մի քանի հայ երգեր։

Պ. Ամիրջանեան իր կոնցերտին երգեց մի շարք օպերաներից ընտիր արիաներ և հայերէն մի քանի երգեր։ Այ վարդ սիրուն րոմանսը, որ առաջին անգամ լսեցինք, շատ գեղեցիկ էր, խօսքերը համապատասխան երգին, երգը երիտասարդ բարիտոնի ձայնին։ Այս կոնցերտին մասնակցում էին և տ. Դ'Վոս-Սոբոլեւա ու սլ. Կաւալեեսկի, որոնք ստացան կոնցերտանտի հետ մի ատեղ շատ ծափահարութիւններ ու ստիպւած եղան բոլորեքեանն էլ ուրիշ կտորներ երգել պրոգրամից դուրս։

—

Տ. Զոսնովսկայի դաստրոյները օպէրետային խմբի մէջ շարունակում են։ Տիկինը երգում է լեհերէն, ձայնը բրնգոյշ և լաւ դերասանուհի է։ Անցեալ շաբաթ սաստիկ շոքերի պատճառով օպերետային խմբի ներկայացումները տրւում էին ամառային Էրմիտաժ թատրոնում, սակայն սկսեցին մի քանի օր շարունակ հեղեղներ ու նորից անցան ազնւականների թատրոնը։ Ուրախ երաժշտութեան սիրահարները աշխուժով այցելում են այդ ներկայացումներին։

—

Լսում ենք, որ հագւում սլ. Պ. Զոհրաբեանի իննիցիատիւով կազմելու է մի այլիօներական ընկերութիւն 300,000 ր. դրամագլխով հագւում մի թատրոն կառուցանելու համար։ Պ. Զոհրաբեանը օրերս գնալու է Խաղիա, ուր մտադիր է գալ տարւայ համար պայմանաւորելու մի քանի լաւ երգիչների հետ հագւում մի շարք օպերային ներկայացումներ տալու։

—

Օր. Պապայեանը արքունական թատրոնում իր կոնցերտից ստացած 400 ր. ընծայել է բարեգործական նպատակների։

—

Լսում ենք, որ օր. Ա. Խիթարեան առաջիկայ աշնան գնում է Պետերբուրգ ուսումնասիրելու դրամատիկ արւեստը։ Յանկանում ենք աջողութիւն և վստահ ենք, որ յարգելի օրիորդը շնորհիւ իր ընդհանուր զարդացման, կարող կլինի կարճ ժամանակում իւրացնել բեմական արւեստը, որի մէջ երևում է նրա տաղանդը։

—

Մոսկւայում մեծ յաջողութեամբ աւարտել է այնտեղի կոնսերւատորիան օր. Ա. Ի. Տէր-Ստեփանեան և պարգևատրել արծաթէ մէդալով։

——

Դատաստական

—

Մայիսի 26—28-ին Թիֆլիսի դատաստական պալատում ննջեց իշխան Ն. Ամատունու և Ն. Ա. Ամիրագեանի գործը։ Պաշտպանում էին մեղադրւողներից երդ. հաւատարմատարներ՝ պ. պ. Տեր-Ստեփանեան եւ Օպոչինին։ Պալատը վոխեց ճանճագական դատարանի վճիռը, որ յայտնի է մեր ընթերցողներին, այսպես. Ա) իշխ. Ն. Ամատունուն՝ 52 տար.—զրկել բոլոր անձնական, առանձնակի եւ սեռական իրաւունքներից եւ կալւածներից, ուղարկել Տոմսկի ճանճագը, 10 ամիս եւ 20 օր ժամանակով, առանց թոյլ տալու այդտեղից հեռանալու, իսկ յետոյ ուղարկել ուրիշ ճանճագներ եւ Սիբիրիա մինչեւ վեց տարի։ Ասպա տասներկու տարի անցնելուց յետոյ առաջարկել ազատ իրաւունք ընտրելու իր համար բնակութիւն Եւրոպական Ռուսիայում, բացի մայրաքաղաքներից եւ մայրաքաղաքեան ճանճագներից—առանց իրաւունքների վերականգնման։ Այս վճիռը ներկայացրել Նորին Կայս. Մեծութեան բարեհայեցողութեան նրա իրաւունքների զրկման վերաբերութեամբ։ Բ) Ն. Ա. Ամիրաղեանին՝ 30 տ.—նոյնպես զրկել բոլոր առանձին իրաւունքներից եւ կալւածներից ու յանձնել ուղղիչ յան-

ցաւորների բաժնին 8 ամիս ժամանակով։

Մեղադրողների բողոքները անհետեւանք են թողնւած։ Իշխ. Ն. Ամատունին, հիւանդութեան պատճառով, գնացել է արտասահման։

ԼՈՒՐԵՐ

Կիրակի, մայիսի 27-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ծննդեան օրը՝ նոր զինուորական տաճարում հանդիսաւոր մաղթանք կատարեցաւ, որին ներկայ գտնւեցին Կովկասի Կառավարչապետը, գեներալիտէտը, զանազան հիմնարկութիւնների և վարչութիւնների ներկայացուցիչները և շատ աղօթողներ։

Մաղթանքներ կատարեցան հայոց և ուրիշ դաւանութիւնների եկեղեցիներում, մէչիթներում և սինագոգներում։ Վաղ առաւօտից քաղաքը զարդարւած էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառւած։

—

Մայիսի 29-ին, առաւօտեան 11 ժամին, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան ազատւեց յղութիւնից, ծնելով աղջիկ, որ անւանւեցաւ Տատիանա։

—

Քաղաքիս իրաւասուների լրացուցիչ ընտրութիւնները, ինչպէս յայտնել էինք, նշանակւած է այսօր, Թիֆլիսի ժողովարանի ամարային շինութեան մէջ։ Ամսիս 18-ին կատարւած ընտրութիւներից շատ դժգոհ են վրացիները և ընտրողներից պայծառ. իշխաններ Գրուզինսկիները և իշխ. Դ. Զ. Մելիքով հրաժարւել են իրաւասու լինելու պաշտօնից։ Ձրնայելով լրագրական ինտրիգներին, դժգոհների թիւը ուրախալի է, որ այդ երկուսով սահմանափակւեց։ Թուս ընտրողները և վրացիներից շատերը ընդունում են իրաւասւի պաշտօնը և պատրաստ են ծառայելու քաղաքիս շահերին իբրև սրտացաւ քաղաքացիներ։ Կրցանկայինք, որ այսօրւայ ընտրութիւններին հայ ընտրողները տային իրանց ձայները ամեն արժանաւոր քաղաքացիի, լինէր նա ռուս, հայ, թէ վրացի։

—

Մայիսի 27-ին վերջացան Ազնւականների բանկի անդամների ընդհանուր ժողովի նիստերը։ Հակառակ միւս տարիների՝ այս տարւայ ժողովները անցան խաղաղ. հաշիւների քննութիւնը առանց աղմուկի կատարւեցաւ։ Ընտրւեցին նաև քննիչ յանձնաժողովի համար տասը անդամները, վարչութեան նախագահ և գնահատող յանձնախմբի մի անդամ։

—

Դեռ անցեալ տարի ի յիշատակ Նոցին Կայսերական Մեծութիւնների թագադրութեան, քաղաքային վարչութիւնը որոշել էր բանալ քաղաքիս Կուկիա թաղում ձրի հաղարային հիւանդանոց և այդ մասին դիմել էր պատշաճաւոր իշխանութեան։ Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ այդ օգտակար հիմնարկութեան բացումը յետաձգւում է, ամսիս 26-ի նստին քաղ. վարչութիւնը կրկին անգամ դիմեց Թիֆլիսի նահանգապետին, որ նա ևս իր կողմից չըխնայէ իր աջակցութիւնը բացելիք ձրի հիւանդանոցի շուտափոյթ վճռելու հարցում։

—

Գեն.-մայէօր Կիրէյը նշանակւած է Գանձակի նահանգապետ։ Հիւանդութեան պատճառով հրաժարեցրած նախկին նահանգապետ իշխ. Նակաշիձէին թոյլատրւած է կրելու իր նշանագգեստը։

—

Բարձրագոյն հրամանով ներկայ 1897 թւին զինուորական ծառայութեան են կոչւում 4,500 հոգի—Թերեքի, Կուբանի շրջաններից և Անդրկովկասի տեղական բնակիչներից։ Դրանց մէջ են հաշւած և 100 հոգի օսերը, որոնք նշանակւած են Թերեքեան կոզակային բանակի համար։

—

Լրագիրները հաղորդում են, որ պարսից շահը մտադիր էր մի ճանապարհորդութիւն կատարել Եւրոպայում, իր հիւանդութիւնից բժշկւելու նպատակով։ Թէհրանում բժշկական համախորհուրդ տեղի ունեցաւ շահի հիւանդութեան մասին, որի ժամանակ կարծիք է յայտնւեց, որ արագ բժշկւելու համար նա պէտք է գնայ եւրոպական կուրորտներ։ խօսք է ընկել նաև Բորժոմի մասին։

Այժմ շահն իր մտադրութիւնից յետ է կանգնել, թէ ինչու—այդ յայտնի չէ։

—

Անգլիական թագուհու յոբէլեանի առիթով Լոնդոնում բազմաթիւ ստեղծագործութիւններ են լոյս տեսել, թէ երգելու և թէ թատրոնում խաղալու համար։ Ահագին յաջողութիւն ունի Սուլլիվանի Վիկտորիա եւ ուրախ Անգլիա (Victoria and Merry England) բալէտը, որի երաժշտութիւնը վերցրւած է անգլիական, շոտլանդական, իրլանդական և տեղական բոլոր մոտիւներից։ Ռուսական մուզիկն էլ մեծ յաջողութիւն ունի. մայիսի 20-ին ջութակահար Գաբրիլովիչը St. James Hall-ի կոնցերտին նւագեց Չայկովսկիից. ժողովուրդը հիացմունքով վերաբերւեց դէպի ռուսական երաժշտապետի գործը, որը շատ հազիւ է պատահում Անգլիայում։

—

Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ Ֆ. Ֆորի Ռուսիա գալը վրճռւած պէտք է համարել։ Նրա մուտքը դէպի Ռուսիա մեծ շուքով կրկատարւի։ Նա ճանապարհ կ'ընկնի Ջերբուրգից կամ Հաւրից «Dupuy de Lôme» մարտանաւով, որի վրայ կրճաճանչի նախագահական դրօշակը։

—

Էրզրումից մեզ հաղորդում են, որ այնտեղի ոստիկանների մեծ մասը հայերից են նշանակւած։ Նոյն իսկ ոստիկանապետը (ժանդարմների գլխաւորը) Տիգրան անունով մի հայ է։

—

Անդրկովկասում և Կուբանի շրջանում ծխահարկի փոխարէն սահմանւում է միայն տուրք անշարժ կայքերի վրայ։

Այդ նպատակով քաղաքային խորհրդարանի մէջ մշակւում է ծրագիր, որով Թիֆլիսի բնակիչները պէտք է բնակարանի հարկ վճարեն և երեք տարի այդ տուրքը վճարելուց յետոյ (ոչ պակաս 200 ր.) ստանան ընտրական իրաւունք քաղաքային ընտրութիւններին մասնակցելու։

—

Կովկասում թէյի տնկման գործին նպաստելու համար՝ Պետերբուրգում մի ընկերութիւն է կազմւել, որը արդէն ուղարկել է իր ներկայացուցիչը Կովկաս թէյի տնկարաններ հիմնելու յարմար տեղեր։

—

Ամսիս 28-ին վախճանւեց Թիֆլիսի Նահանգի պետական կալւածների վարչութեան կառավարիչ Գամբեկելով։

—

Հեղեղները Բուլղարիայում և Սերբիայում անագին աւերումներ են պատճել։ Փանդ-ւել են շատ կամուրջներ, երկաթուղու գծեր, ողողել քաղաքներ, գիւղեր։ Երկու պետութիւնների վնասները անագին են։

—

Ջեդդայից (Տաճկաստան) ստացած տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ մի քանի հոգի հիւանդացան կասկածելի նշաններով, որոնք նման են ժանտախտի նշաններին։

—

Թիֆլիսում բացած թուչնաբուծների ցուցահանդէսը փակեց և մայիսի 27-ին էկսպերտները որոշեցին 14 հոգու մրցանակ տալ, որոնցից վեց հոգի հայեր են։ Հայերից Ն. Ա. Մամիկոնեանին տրել է արծաթէ մեծ մէդալ, Գ. Ա. Ղամազեանին (գիմնազիօնի աշակերտ) և Ա. Քալանթարեանին՝ փոքր բրոնզէ մէդալներ, տ. Սուլխանեանին մեծ բրոնզէ մէդալ. իսկ Զիլոզեանին և Գովիանեանին տրել են գովասանական թղթեր։

Ոսկէ մէդալ ոչ ոք արժանի չի համարել և այդ թողնուած է ուրիշ անգամի։

Խառն լուրեր

Ցոյն-տաճկական գործերի մասին բանակցութիւնները շարունակւում են։ Պեսպաները ժողովներ են անում Կ. Պոլսում. բէեւ ճշդիւ յայտնի չէ, թէ ինչ եզրակացութեան կըյանգեն պետութիւնները, սակայն երեւում է, որ եթէ Տաճկաստանը չ'ընդունի պետութիւնների որոշումը, ոչ ոք սրանցից չի դիմելու սպիտղական միջոցների տաճիկներին Թեսալիայից բշելու համար։ Կան առաւկողներ էլ, թէ Անգլիան եւ Ռուսիան ցոյց կանեն տաճկի դէմ, որպէս զի Տաճկաստանը սպիտի լսել Եւրոպային։

— Աթէնքում ժողովրդական յուզումները չեն վերջանում։ Թագաւորական տան անդամները չեն կարողանում դուրս գալ իրանց տներից։ Եթէ եւրոպական նաւատորմիղի ներկայութիւնը չըլինի յունական ջրերում, լուրերի ասելով, մեծ խռովութիւններ կըծագեն Ռումելիայում։ Թագաժառանգը Պոմակոսի պատուիրիցից չեռոյ, իմանալով աթէնացիների զգացումները իր դէմ, կամենում էր անձնասպանութիւն գործել, բայց սպաները չըթողին։

— Ռումելիան միլիսար-նախագահի Ռալլիի հաւով, եթէ տաճիկները չըբերին Թեսալիայից, Ռումելիային 50 միլիոնի վնաս կրհասնի, որովհետեւ հումնձերը կըփչանան։

— Ցոյն-տաճկական պատերազմի ժամանակ Տաճկաստանից արտասուած են 16 հազար յոյներ, որոնցից 7,500-ը միայն Կ. Պոլսից են։

— Պեսպաները իրանց պատասխանը յայտնեցին Պրանը։ Պատասխանի մէջ բացատրած է, թէ պատերազմական տուգանքը շատ մեծ է եւ բացի սրանից բոլոր չեն ցալ Թեսալիայի մըտսական գրաւման։ Զրնայելով տէրութիւնների այս որոշումին, պալատական շրջանակներում մեղադրութիւն կայ Լրդուս գալ Թեսալիայից մինչեւ գոհացումն ստանալը յոյներից։

— Տաճիկ զօրերը եւ բաշիբոզուկները մեծ աւերածութիւններ են գործել Թեսալիայում եւ ահագին վնասներ տալ խաղաղ բնակիչներին։ Անգլիական դեսպանը Կ. Պոլսում հարց է բարձրացրել որ Պուռը վարձատրէ վնասուած հահանգի բնակիչներին։

Այդ շատ լաւ, բայց ով կըլսի այդ արդար բողոքը. առածն ասում է՝ մի ձեռը ծախ չի տալ։

— Սուլթանի վերջին գիջումները Ռուղարիային եւ Սերբիային լոկ խոստումներ են եղել, վերջին պատերազմում նրանց խաղաղ պահելու դիտաւորութեամբ։ Այժմ մի ինչ-որ դժգոհութիւն է նկատւում Բալկանեան պետութիւնների մէջ այդ մասին եւ կարող է մեծ ծաւալ ստանալ, եթէ պետութիւնները խաղաղութիւնը չըխախտելու պատրւակով նրանց վրայ ճնշում չգործ դնեն։

— Տաճիկները նաւսած Թեսալիայում մեզրել են արդէն տաճկական կարգերը։

Այնտեղ մնացած յոյն պատասխանատուները համարում են կողմնակի մարդիկ։

— Հաւաստացնում են, որ Կ. Պոլսի դեսպանները մայիսի 24-ի նիստում մի չիստակագիր են ներկայացրել Թեսալիայի սահմանները որոշելու, պատերազմական տուգանքի (4 միլիոն է իբրեւ թէ որոշած) եւ դատաստարների մասին։

—

Մեր պատկերները

Փորիկ չամաւը. նկար Միւնիէի.

Նկարիչը խիստ գրագիտ գծել է այն փորիկ չամաւո աղջկայ պատկերը, որ տեսնելով դայեակը հեռացել է մանկանոցից, դուրս է պրծել անկողնից, կես հագնուած ուզում է մտնել միւս սենեակը, որտեղից լսւում են իր մեծ եղբայրների եւ քոյրերի ձայները։ Ժամանակ է բնելու... սառկայն նա չէ ուզում եւ տհաս արտասուքը պատրաստ է կաթկթելու նրա սեւ աչքերից, երբ մեկը նրա վրայ գայրանայ։ Նա առանց այդ էլ չէր ուզում քնել, բայց դայեակը գոռով նրան անկողին մտցրեց։ Փորիկ աղջիկը մտածմունքի մէջ է, թէ ինչու իրան ստիպում են շուտով քնելու։

Նկարիչը տաղանդով է գծել չամաւո երեխայի տիպը եւ անկարգ մանկանոցի տեսարանը։

Այլ եւ այլ

Լ Լ Ե Կ Տ Ր Ա Կ Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

Մէրայ, Խորաս եւ Ռոգա գերմանացիները բոլշեւութիւն ստացան իրանց նոր գիւղը գործադրելու։ Այդ գիւղն է էլէկտրական տպարանը եւ շարաձքը։ Ինքնաշարժ գործիների միջոցով ճնշուած է լինում այդ տեսակ տպարանում շարել մի ժամւայ մէջ 500 տող, որ ի հարկէ ժամանակի շատ մեծ խնայողութիւն է եւ մեծ առաւելութիւն ունի ձեռքով շարելուց։ Ընորհիւ էլեկտրականութեան, կենդրոնական էլեկտ. մեքենայի հետ կարելի է միացնել տասնեակ ուրիշ մեքենաներ, այնպես որ մի բանի լրագիրներ միաժամանակ կարող են տպագրել այն բոլոր բաղաքներում, ուր դրած կըլինին այդ մեքենաներից։

Սրանով կարելի է նշանաւոր չափով իջացնել փոստային ծախքերը եւ զանազան տեղեկութիւնները հաղորդել միաժամանակ մի բանի, մինչեւ անգամ հեռաւոր տեղեր։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ն. Նախիջեւան. Մ. Ռ. *Շոսկնհաուէրը* գրականութեան ստր ապրանք է համարում լրագրութիւնը։ *Դնօքհն* օրագիրներին աւելի անճշտ տեղ է տալիս։ Նրա ասելով, եթէ մի բանի ժամանակ լրագիր չըկարդաս, եւ ապա մի օր այդ բոլոր №№-ը ժողովէք եւ կարդաք, կըցաւէք միայն այն կարեւոր համար, որ վճարել են մահուր թղթին եւ մոռել։

Ռագու. Ս.. Թ. Ի զուր էք կարծում թէ օրն ի բուն տաժանելի աշխատութիւնը եւ ջանասիրութիւնը կարող են օգտակար. եւ ցանկալի հետեւանքի հասցնել։ Անգլիացի *Պէչէս* պրոֆէսսորը պարզ փորձերով ապացուցել է, որ յոգնած ուղեղով մարդը անհամեմատ պակաս գործ է շինում։ Նա մի ամբողջ տարի դասարանի աշակերտներին բաժանել է երկու հաւասար մասի։ Նրանցից մի մասի հետ պարապել է կէս ժամ, իսկ կէս ժամը ազատ օդում խաղացրել է աշակերտներին։ Հետեւանքն այն է եղել, որ ուղիղ կիսով չափ պարապող բոլոր աշակերտներն աւելի լաւ են սովորել եւ ըմբռնել իրանց դասը, քան նրանք, որոնք ամբողջ որոշած ժամանակը են պարապել եւ սերտել դասերը։

Ն. Նախիջեւան Ս. Զ. Մի № մեր թերթերից երբ չէք ստանում, պէտք է յայտնէք անյապաղ, ոչ ուշ քան հետեւեալ №-ի ձեր ստանլը։ Մենք ուղարկում ենք կանոնաւոր եւ միշտ պոստից ստանում ենք բնկալագիր։ Պարիսին յայտնել, թէ դըպրոցի մատենադարանը յունուարի № 1-ը չէ ստացել, համաձայնեցէք, որ այդ կարելի չէ։ Մենք ուղարկեցինք այդ №-ը իբրեւ դպրոցի, այն համոզմունքով, որ

մատենադարանն է կարել եւ ոչ թէ պոստում:

Պարիզ. Տիկ. Մ. Ս. Հաւատարմաթուղթ Ձեզ, իբրեւ Փրանսիայում մեր թերթերի ներկայացուցիչ 97 թւականի, ուղարկում ենք: Լոնդոնում ունինք ներկայացուցիչ:

Ախլքսանդրապոլ. Ճ. Ա. Ճնորհ առէք, խնդրում ենք *Սաֆոյի* յօգտիրը վուրով մեզ հասցնելու, որ ձեզ յանձնեցինք: Կլիւճն վաղուց ստացած է:

Վլադիկաւկազ. Ֆ.Խ. Ձեր գեղեցիկ թարգմանութիւնը՝ Rivales ցեզգուրայից թոյլատրւում է եւ շուտով կրպագրի: Միւսները *Տարազում:*

Երեւան. Թ. Խ. Արտասահման գնալու համար իճարկէ կարող էք անցագիր ստանալ եւ այդեղի ճանաչգապեցից: Անցեալ ապրիլից անցագրեր ստանալու համար նոր օրէնքներ են սահմանուած եւ բաւական նեղացուած ենք: Մախատանը, մեր սահմանի վրայ, չըպէտք է ոչինչ վնասէ, միայն տրտնանել չի կարելի մի բանի առարկաներ, առանց առանձին թոյլտւութեան: Արտասահմանից վերադառնալուց կրնայեն ձեր իրերից եւ բացի ձեր հագուստից ու մի բանի մանր-մունր առարկաներից, պէտք է ապրդող բաների համար մաս վճարէք:

Այո, լաւ կրլինի, որ դրամը մանրացնէք Թիֆլիսում կամ Օդեսսա՝ ճանապարհի համար, յետոյ Բերլինում կարող էք ռուսական դրամը վոխել գերմանականի:

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՑԻ

Սոլոլակի եւ Հալթաբարի ճաշարանների (ձրի եւ էժանագին)

1896 թ. 1 մայիսի—1897 թ. 1 մայիսի.

Տարեան ընթացքում մուտքի ընդհանուր գումարը եղել է 9584 ր. 6 կ., որ բաղկացել է անդամակցական վճարներից—1408 ր., միանուագ ներդրութիւններից 5072 ր. 99 կ., որոնցից 1300 ր. ստացել է Կովկասեան պ. կառավարչապետից պ. ոսկիճանապեցի միջոցով, Տանկաստանից վճռած դպրեցին ճաշ տալու համար, 2260 ր. (անձեռնմխելի գումար) զանազան անձնաւորութիւններից եւ հաստատութիւններից, դրամագլխի տոկոսից—540 ր. 12 կ., դիմականանցէսից—1854 ր. 75 կ., ճաշերի վաճառումից—261 ր. 48 կ., տոմակների վաճառումից—345 ր. 60 կ., թաթախման համար ստացած է 80 ր., զանձանակի տուփից հաւաած է 21 ր. 12 կ.:

Անցեալ հաշի տարեանից մնացորդ կար առ 1-ն մայիսի 1896 ամի—8457 ր. 71 կ., ուրեմն ընդամենը 18041 ր. 77 կոպէկ:

Ծախքը երկու ճաշարաններում եղել է 6009 ր. 56 կ., գումից Հալթաբարի ճաշարանի համար, որ բացած է յատկապէս հայ գաղթականների համար, 1897 թւի ապրիլի 15-ին, երկու շաբաթւան ընթացքում, մինչեւ հաշւի տարեան վերջը, ծախսած է 507 ր. 26 կ., որոնցից պաշարի տուած է 192 ր. 54 կ., ռոճիկ—17 ր., քնակարան—10 ր., վառելիք—26 ր. 80 կոպ., մանր ծախքեր—5 ր. 12 կոպ. եւ նախնական սարք ու կարգի ծախքեր—225 ր. 80 կ.:

Սոլոլակի ճաշարանի ծախքը եղել է 5502 ր. 30 կ., որից պաշարեղէն—4446 ր. 41 կ., ռոճիկ ծառայողներին—224 ր. 50 կ., քնակարան—320 ր., մանր ծախքեր—250 ր. 17 կ., թաթախումն—261 ր. 22 կ.:

Մնացորդն առ 1-ն մայիսի 1897 թւի ճաշարանի դրամարկղում—12032 ր. 21 կ.:

Ընդհանուր ճաշարանների այցելութեանց թիւն է տարեան ընթացքում 91.797, որոնցից Հալթաբարի ճաշարանը այցելել են երկու շաբաթւան ընթացքում 2882 անգամ, իսկ Սոլոլակի ճաշարանը եղած այցելութեանց թիւն աւելացել է անցեալ տարւանից 48,878-ով եւ հասել է 88915-ի (դրանցից ձրիների թիւն է 82612, իսկ վճարողներինը—6273): 88915 այցելութեանց իւրաքանչիւրը էժանագին ճաշարանին արժեցել է 6, 2 կոպէկ:

Անդրկովկասեան երկաթուղի

(Մայիսի 6-ից)

Կայարան	Բագուից-Բաթում Մարդատար Գալիս	Մարդատար Գնում	Պոստային Գալիս	Պոստային Գնում
		ժր.		ժամ.
Բագու .	—	4.01	—	12.06
Էլախ .	11.51	12 03	9.22	9.45
Գանձակ	2.14	2·28	12.80	12.30
Ազստաֆ.	5·20	5.35	3.40	3.59
Թիֆլիս	ա. 8 30	ա. 9.15	եր.7 10	եր.8 00
Գորի . .	11 20	11.27	10·16	10.25
Մլխայէլ.	12.37	12.52	11.10	11.54
Բաթում	եր 8 48	—	ա. 8.45	—

Կայարան	Բաթումից-Բագու Մարդատար Գալիս	Մարդատար Գնում	Պոստային Գալիս	Պոստային Գնում
Բաթում	—	7.45	—	եր.8.35
Մլխայէլ.	4.42	5.12	5.27	5.42
Գորի . .	6.20	6.36	6.50	7.00
Թիֆլիս	եր8 . 34	եր.9.34	ա. 9.11	ա.11.00
Ազստաֆ.	Ի2.16	2.27	2.00	2.20
Գանձակ	3.12	3.22	5.30	6.00
Էլախ .	5.08	5.18	8.03	8.20
Բագու .	ժր.1.02	—	ա. 6.00	—

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

4 դոյնով տպագրուած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր եւ գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր եւ Տարազի 96 եւ 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Դիմել՝ Տիֆլիս, Агбюръ կամ Таразъ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից՝

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Ֆ. ՀԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ ԲՈՒԴՆԻԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ 12—1 ժ. ա. կանջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Ֆ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Ֆ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշոր բաղաքական հետազոտութիւններ է անում մէզի, խոխ, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

ԲԺՇԿապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Зуболѣчебный Кабинетъ Д-та Кавказскаго Офицерскаго Эконом. общества Ю. А ФРАНКЪ. Лѣченіе, пломбированіе, извлеченіе и вставленіе искусственныхъ зубовъ. Пріемъ больныхъ отъ 9-хъ час. утра до 7-ми часовъ вечера.

Головинскій пр. д. Сергѣева № 7

10—5

Թարգմանւում է

Սեբաստիան Կնայպի

„МОЕ ЧУДЕСНОЕ ВОДОЛѢЧЕНІЕ"

հնդլնակութիւնը:

5—4

Աղբիւր-Տարազի

զրասենեակում Իտալիայից եւ Քրանսիայից ստացել են մեծ բանակութեամբ 200 տեսակից աւելի *օյեօգրաֆիական* **շատ գեղեցիկ ՊԱՏԿԵՐՆԵՐ, ինսը ճանապարհածախսով 30 կ. մինչ 3 ր.**

Дозв. ценз. Тифлисъ, 31 мая 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.